**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 28.06.2022թ.**
**N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/31-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «15» օգոստոսի 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ա. Հարությունյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Հովհաննեսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 28.06.2022թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/31-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

Հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված 180 հատ օդորակիչներից 70 հատ օդորակիչների մասով Պայմանագիրը 15.07.2022թ. կնքված N 1 համաձայնագրով ուժի մեջ դրված լինելը, մնացած 110 հատ օդորակիչներից 50 հատ օդորակիչների մասով **10 000 000 (տաս միլիոն)** ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. 50 հատ օդորակիչների մասով հաստատել վճարման ժամանակացույց՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 2 համաձայնագրի անբաժանելի մասը:

**3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 21 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 02235463 |
| Հ/Հ՝ 900011025757 | Հ/Հ՝ 2050022129881001 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Ա. Հարությունյան | Տնօրեն՝ Վ. Հովհաննիսյան |
| _______________ /ստորագրություն/ Կ.Տ | _______________ /ստորագրություն/ Կ.Տ |

**Հավելված N 1**
**« 15 » օգոստոսի 2022թ. կնքված**
**N 2 համաձայնագրի**

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | |
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 39714210/5 | 1. Օդորակիչ 9000 BTU | 10 000 000 | 10 000 000 | 10 000 000 | 10 000 000 | 10 000 000 | **10 000 000** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 21
ՀՎՀՀ՝ 02235463
Հ/Հ՝ 2050022129881001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ. Եղիազարյան

/ստորագրություն/
Կ.Տ